ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ՌՈՒԲԵՆ ԳԱԳԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ
«Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի կազմակերպման դիզայներական խնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԷ.00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը յուրահատուկ ուսումնասիրություն է և օգտակար գործնական տեսակետից: Աշտարակը Հայաստանի փոքր պատմական քաղաքներից է, որ կարևոր է հատկապես իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ: Առաջնահերթություն է ոչ միայն քաղաքի պատմական հուշարձանների պահպանությունը, այլ նաև դրանց տարածքների դիզայներական համակարգումը և՛ որպես միջավայրի կազմակերպում, և՛ որպես զբաստաշրջային օբյեկտ:

Փաստորեն, Աշտարակի հնագիտական և ճարտարապետական հայկական հարստությունը՝ ուսումնասիրության առարկա է դարձել 1960-1980թթ.: Ներկա վիճակում բնագավառի ճանաչողությունը մեծ փոփոխությունների է ենթարկվել, հատկապես փոփոխվել են բնակավայրի քաղաքաշինական իրավիճակը, ուստի կարևոր է ընդհանուր քաղաքային կերպարի, հուշարձանատարածքների միջավայրային վերակազմակերպման ու ծավալատարածական ներդաշնակեցման անհրաժեշտությունը:

Աշտարակը, ինչպես նշում է հեղինակը, բազմաշերտ քաղաք է պատմաճարտարապետական առումով, և որքան մեզ հայտնի է, այն խորապես չէր դիտարկվել իր կառուցվածքի պատմա-գեղարվեստական շերտերով, ինչն իր առջև խնդիր է դրել հեղինակը: Այդ խնդիրները նա բաժանում է հինգ կետերի: Հատկապես կարևորվում է երկրորդ կետը, որտեղ անհասկանալի է «գրասենյակային համակառույց» արտահայտությունը, այսինքն «ստեղծագործական վա՞յր», ինչպես Կոմայգին է եղել, որտեղ Պարույր Սևակը գրել է իր պոեմը, նվիրված Կոմիտասին, ինչի ականատեսն անձամբ եմ եղել: Մնացածը հասկանալի է և անհրաժեշտ:

Ուշագրավ է, որ հեղինակն այդ խնդիրների լուծումը, այսինքն քաղաքը որպես հանգստի վայր, ինչի նշանակությունը մեծ է, անհրաժեշտ է համարում:

Կարևոր է, որ ինչպես նշում է հեղինակը, քաղաքի պատկերը և նրա արտաքին տեսքի բարելավումը դիտարկվում է ոչ այնքան ճարտարապետության, որքան դիզայնի տեսակետից, որ նորարարություն կարելի է համարել և անհրաժեշտ:

Բուն աշխատանքը կազմված է ներածությանը հաջորդող երեք գլուխներից, եզրակացություններից, 38 անվանումով հայ և օտար գրականության ցանկից և մանրամասնող գծագրական տախտակներից:

Առաջին՝ «Պատմատեսական և զուգահեռների ընդհանուր տեղեկություններ» գլխում նախ նշվում է, որ քաղաքը շատ հին է՝ ելնելով հնագույն դամբարանադաշտերից: Հեղինակը փորձ է անում ըստ ժամանակաշրջանների դիտարկել հուշարձանները՝ նախնադարի, միջնադարի և նոր ու արդի հուշարձաններ: Այդ հուշարձանները նշվում են ըստ ժամանակաշրջանների. մինչև մեր օրերը: Հեղինակի մտածողությունը գիտական է, նույնիսկ այն դեպքերում, երբ խնդիր է ունենում

հուշարձանների ժամանակագրական տիպերի, համակարգերի սիստեմավորման հարցում:

Ատենախոսի կողմից քննականորեն ներկայացվել է ատենախոսության պատմատեսական հենքը, ինչպես նաև դիտարկվել են Աշտարակին զուգահեռ՝ հայկական և միջազգային համապատասխան օրինակներն ու դրանց ներդրման ՅՈՒՆԵՍԿՕ-ի ԵՎ ԻԿՈՄՈՍ-ի դրույթները: Ատենախոսության քաղաքային կերպարի և միջավայրային դիզայնի դրույթները հիմնվում են Քևին Լինչի հայտնի «Քաղաքի կերպար» (1980թ.), ինչպես նաև Վլադիմիր Շիմքոյի «Միջավայրի դիզայնի կազմակերպման սկզբունքները» (2005թ.) դասագրքերի մասնագիտական դրույթների վրա:

Նա ներկայացնում է համակարգ հնագույն, հին և նոր կառույցների իր դասավորման մասին ըստ ժամանակաշրջանների, որպեսզի մշակույթի և արվեստի նյութերը ներկայացվեն կարգավորված վիճակում, ինչն էլ հայեցակարգային ենթատեքստով փաստագրվել և վերլուծվել են հաջորդ երկու գլուխներում: Նա առաջադրում է բաց երկնքի տակ թանգարանային համալիր՝ նշելով մի շարք կետերով այդ գաղափարի իրականացումը: Սրանք առաջին գաղափարներն են:

Երկրորդ գլուխը՝ «Աշտարակ քաղաքի շրջակա պատմամշակութային հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը», նվիրված է Աշտարակի շրջակա հուշարձանների դիզայներական կազմակերպմանը, այդ թվում են՝ Վերին նավերի տարածքը, Վաղագույն դամբարանաբլուրը, Թռեղք վանաձորյան մշակույթի դամբարանները, Կարմիրբերդյան մշակույթի դամբարանները, Սևան–Արցախյան դամբարանաբլուրը և այլ դամբարաններ ու կոթողներ: Այնուհետև փաստագրավերլուծվել ու դիզայներական սահմանված հայացեկարգով կազմակերպվել են՝ Խոջաբաղեր դամբարանադաշտը, ուրարտական ջրանցքը, Ուլետիտիկ բնակավայրը և այլն: Ինչպես ցույց է տալիս հեղինակը, 1972թ. կոնվենցիայից մշակութային կամ բնական ժառանգության որևէ օբյեկտի վնասումը կամ անհետացումը հանգեցնում է «բոլոր ազգերի ժառանգության կործանարար աղքատացմանը»:

Երրորդ՝ «Աշտարակ քաղաքի կորիզի հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը» գլուխը նվիրված է Աշտարակի շրջակա հուշարձաններին՝ Ս.Մարիանե, Ուռուց, Մշակույթի տուն, Բնակելի տների գոտին (զանազան ժողովրդական բնակելի տներ), Բերդաթաղի հուշարձանները (Աշտարակի բերդը, Ս. Ծիրանավոր, Ս. Սպիտակավոր, Կարմրավոր) և այլ կառույցները (հին կամուրջը, Պերճ Պռոշյանի տուն թանգարանը և այլն): Դրանք պատմա-գեղարվեստական մեծ արժեք ունեն: Աշտարակի և նրա հուշարձանների գոյությունը ոչ միայն դրանց արժեքն է, այլև որ դրանք քարե դարի ժամանակներից հասնում են մինչև մեր օրերը: Եվ մեր հեղինակի մեծ ծառայությունը դրանց համակարգումն է ըստ ժամանակի՝ միջին բրոնզե դարից մինչև միջնադարյան կոթողներ: Հեղինակը բարձր է գնահատում հնագետներին և Աշտարակի ու շրջակայքի գեղարվեստական գործերի գնահատումը թողնում է նրանց:

Ատենախոսության վերջին գլխում անդրադարձ է կատարվում հուշարձանների դիզայներական կազմակերպմանը, որի ուսումնասիրության մասին կարելի է երկար խոսել, քանի որ այն գիտակ և մասնագետ մարդու վստահելի աշխատանք է, ինչպես նկարագրություններում, այնպես էլ վերլուծություններում:

Աշխատության վերջում եզրակացություններ են, որտեղ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները:

Ամփոփելով աշխատանքը նշենք, որ ատենախոսությունն ունի դիզայներական կազմակերպման գեղագիտական և ձևավորման տեսակետներ, ինչպես նաև ընդհանուր եզրակացություններ, որոնք ամրագրում են Աշտարակի պատմամշակութային ժառանգության հուշարձանների դիզայներական կազմակերպումը արտաքաղաքային և ներքաղաքային երկու գոտիներով:

Արտաքաղաքայինի հայեցակարգում ներմուծվել են՝ Աշտարակը շրջանցող մայրուղին, մասնավորվում են մայրուղուց ճյուղավորվող դեստինացիաները, դիզայներական միջոցառումներ են՝ ազդանշանային միջոցների տեղաբաշխումը, այցելության միջավայրի ֆունկցիոնալ և հորինվածքային մթնոլորտի ու տարրերի ստեղծումը և ներդաշնակության միջոցներով ապահովումը:

Ներքաղաքային հուշարձանների տարածքի կազմակերպումը սկսվում է քաղաքաշինական իրադրությունից, ապա անցում է կատարվում ներքաղաքային միջավայրի կազմակերպման հարցերին, որոնք նույնպես առաջնորդվում են դիզայնի առարկայական միջավայրի ներդաշնակեցման խնդիրներով:

Ավարտելով մեր խոսքը, եզրակացնում ենք, որ այն գիտակ և ցավող մարդու խոհեր են՝ միանգամայն ռեալ:

Ռուբեն Ոսկանյանի ատենախոսությունը կարելի է համարել կայացած գիտական աշխատություն: Բարձր գնահատելով հանդերձ ներկայացվածն ունի հետևյալ դիտողությունները.

1. «Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների համալիր կազմակերպման ինֆրակառուցվածքի հավելումը՝ որպես գրասենյակային համակառույց, հանգստի կազմակերպման օբյեկտներ, մատչելիության միջոցառումներ» կետում անհասկանալի է «գրասենյակային համակառույց» արտահայտությունը, ինչը բացատրության կարիք ունի:
2. Ատենախոսության գրականության ցանկում ընդգրկված աշխատություններում պետք է նշվեր նաև ընդհանուր էջերի քանակը:
3. Ատենախոսությունը հարուստ վերլուծությամբ հանդերձ, կարծում եմ, որ ցանկալի է գծագրական իլյուստրացիաները նույնպես ներկայացվեին հարուստ կազմով:

Վերոնշյալ դիտողությունները բնավ չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը, և ատենախոսի կողմից ներկայացված աշխատությունն իր իսկ հայցած գիտական աստիճանի և գիտական արժեքից բացի ունի նաև պրակտիկ ու կարևոր նշանակություն:

Արդյունքում՝ գտնում եմ, որ Ռուբեն Գագիկի Ոսկանյանի «Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի կազմակերպման դիզայներական խնդիրներ» թեմայով ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսը միանգամայն արժանի է ԺԷ.00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, և գիտական արժեքից բացի ունի նաև պրակտիկ և կարևոր

նշանակություն, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժին վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Վիգեն Ղազարյան

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

17 սեպտեմբերի 2020թ.